Հարություն Տիգրանյանի սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-17 14:09:23

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

17.11.2026թ.-ին ժամը 15:00-ին նշանակված Հարություն Տիգրանյանի սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդը չի կայացել հայտ չլինելու պատճառով:
16.12.2026թ ին ժամը 15:00-ին Հարություն Տիգրանյանի սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանի կողմից Երեւան քաղաքի Արշակունյաց 5 շենքի 109 դահլիճում կանցկացվի Հարություն Տիգրանյանի սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդ՝ բաց դասական եղանակով երկու առանձին լոտով: Աճուրդը անցկացվելու է ՀՀ Արդարադատության նախարարի 16.02.2020թ.,թիվ 116-ն հրամանով սահմանված կարգի 36-րդ կետի համաձայն
1. Լոտ 1-ը իրենից ներկայացնում է տրանսպորտային միջոց՝DAEWOONEIA 1.5 I մակնիշի 34 AU 597 հաշվառման համարանիշի ,սպիտակ գույնի, 2013թ արտադրության, տեսակը՝ թեթև մարդատար ավտոմոբիլ, այն շահագործման ենթակա չէ: Լոտի մեկնարկային գինը՝ 41650 ՀՀ դրամ /քառասունմեկհազարվեցհարյուրհիսուն/ ՀՀ դրամ:
2. Լոտ 2-ը իրենից ներկայացնում է տրանսպորտային միջոց՝DAEWOO NEIA 1.5 I մակնիշի 30 LU 474 հաշվառման համարանիշի, սպիտակ գույնի, 2011թ արտադրության, տեսակը՝ թեթև մարդատար ավտոմոբիլ, այն շահագործման ենթակա չէ: Լոտի մեկնարկային գինը՝ 26500 ՀՀ դրամ /քսանվեցհազարհինգհարյուր/ ՀՀ դրամ:
Ծանոթություն աճուրդի ներկայացված տրանսպորտային միջոցները՝գտնվումեն Հարկադիր կատարման ծառայության Եղվարդ քաղաքի պահպանման գոտում: գույքի պետական գրանցման ծախսերը կատարվում է գնորդի կողմից: Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճեն, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը: Մասնակցության վճարը և նախավճարը կազմում է լոտի գնի համապատասխանաբար 1%--ը և 5%-ը: Մասնակցության վճարը չպետք է

գերազանցի ՀՀ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը պետք է մուծվի <<Արդշինբանկ>>ՓԲԸ Ծ/Մ բացված սնանկության հատուկ հաշվին՝ հ/հ 2475003869480001 : Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձիք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ, կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարանի գրասենյակ՝ ք. Երևան Ե. Օտյան 53/2: Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձիք, աճուրդին ներկա գտնվելու համար վճարում են մուտքի վճար՝ վերը նշված Հ/Հ, որի չափը չի կարող գերաղանցել նվազագույն աշխատավարձի տասնապատիկը: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Լոտն ուսումնասիրելու, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար ցանկացողները կարող են զանգահարել Հարություն Տիգրանյանի սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանին, հեռ. 091-40-79-15 կամ այցելել ք.Երևան, Արշակունյաց 5շ. 416 սենյակ:

37491407915

mayis.hayrapetyan.2015@mail.ru

ք.Երևան, Արշակունյաց պող.5, 416 սենյակ